Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՅԱՆՔԻՆ ԿԱՄ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»(Պ-085-09.11.2021-ՊԱ-011/0)ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

	Առաջարկի (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկը	Առաջարկ (փոփոխություն, լրացում)	Առաջարկի վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկի ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
	ՀՀ Կառավարություն	«Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների մասին» Հայաստանի Հանրապետության 2016 թվականի դեկտեմբերի 15-ի ՀՕ-245-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածում 3-րդ մասը լրացնել 5-րդ կետով.	«5) զինծառայողի հետ գրանցված ամուսնության մեջ չգտնվող և համատեղ զավակ ունեցող անձը: Զինծառայողից ամուսնալուծված, սակայն համատեղ զավակ ունեցող անձը չի համարվում շահառու:».	Ընդունվել է	Ընդունվել է
	ՀՀ Կառավարություն	Օրենքի 2-րդ հոդվածը լրացնել լրացնել 4.1-ին մասով.	«4.1. Սույն հոդվածի 3-րդ և 4-րդ մասերում նշված շահառուների բացակայության դեպքում շահառու են համարվում նաև զինծառայողի եղբայրը և քույրը, եթե տվյալ զինծառայողների մասով նախկինում որևէ այլ շահառու գումար չի ստացել:».	Ընդունվել է	Ընդունվել է

ՀՀ Կառավարություն	Օրենքի 2-րդ հոդվածը լրացնել 7-րդ մասով.	«7. Սույն հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի իմաստով շահառուների բացակայություն է համարվում համապատասխան շահառուի ֆիզիկապես գոյություն չունենալը՝ ներառյալ դատական կարգով անհայտ բացակայող կամ մահացած ճանաչված կամ ծնողական իրավունքներից զրկված լինելը կամ համապատասխան կարգավիճակ չունենալը:»:	Ընդունվել է	Ընդունվել է:
ՀՀ Կառավարություն	Օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետ և 5-րդ մաս.	«3-րդ և 4-րդ» բառերը փոխարինել «3-րդ կամ 4-րդ կամ 4.1-ին» բառերով:	Ընդունվել է	Ընդունվել է
ՀՀ Կառավարություն	Օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մաս.	«3-րդ և 4-րդ» բառերը փոխարինել «3-րդ, 4-րդ և 4.1-ին» բառերով:	Ընդունվել է	Ընդունվել է
ՀՀ Կառավարություն	Նախագիծը լրացնել 3-րդ հոդվածով.	«1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: 2. Սույն օրենքի 1-ին հոդվածի 2-րդ կետի գործողությունը տարածվում է 2017 թվականի հունվարի 1-ից հետո տեղի ունեցած հատուցման դեպքերի վրա: 3. Սույն օրենքից բխող այլ նորմատիվ իրավական ակտերում անհրաժեշտ փոփոխությունները և լրացումներն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո 90 օրացուցային օրվա ընթացքում:»:	Ընդունվել է	Ընդունվել է